

կան տեսակետից վերջինների համար միացեալ ուսուցումը կարող է վնասակար լինել, Ահա այդ աչքի առաջ ունենալով դպրոցի տեսուչը շինել տուեց Շ բաժինը բոլորովին առանձնակի միւս շինութիւններից, որպէս զի սաների ապագայ առանձնացումը հնարաւոր լինի, երբ դորա անհրաժեշտութիւնն զգացուի, Ամբողջ հիմնարկութիւնը շինուած է Անգլո—Գոթական ոճով, իսկ պատերն ամբողջապէս հատաքարից են, նա բաղկացած է 109 ընդարձակ սենեակներից, 4 խոհանոցից, չհաշուած ներքնատունը, որտեղ զետեղուած է բաղանիքը, լուացարանը, մառանը և այլն, Իւրաքանչիւր յարկում գտնուում է 3 ոչ-մեծ ննջարան, իւրաքանչիւրը 10—12 մահճակալներով (նման ամերիկական համանման կրթական տներին), Բոլոր շինութիւնները տաքանում են շոգիով և լուսաւորում են էլէքտրականութեամբ, միայն շինութեան համար յատկապէս ծախսուել է 520,000 կրօն (մօտաւորապէս 275,000 ր.)

Սկզբներում այդ հիմնարկութիւնը ցանկանում էին հաստատել նոյն շրջանում գտնուող Գէտեբորգ մեծ քաղաքում, բայց Լանդստինգում այդ հարցը քննելիս, ձայների մեծամասնութիւնը ի նրպատ փոքր քաղաքի ձայն տուեց, աչքի առաջ ունենալով նորա բաղմամբ առաւելութիւնները, ինչպէս տնտեսական, նոյնպէս և մանկավարժական և բարոյական տեսակէտները:

ՄԱՆՐԱԼՈՒՐԲ.

Հաւաքուածութիւնը միացեալ նահանգներում: — 1895 թ. միաց. նահանգների բոլոր արծաթի հանքերն ի միասին տուին 72000031 զուլարի եկամուտ, իսկ ոսկու հանքերը 4661000 զուլար: 1896 թ. Ամերիկայի մէջ եղած բոլոր ուխտարներն արժէին 63,167,725 զուլար, իսկ նոցանից գոյացած բուրդը տուեց 7,535,481 զուլար: Գալով հաւերին՝ 1896 թ. այդ երկրում կար 258,874,125 հաւ եւ 26758515 ուրիշ թռչուններ (սագ, ըաղ, հնդկահաւ եւն), իւրացանչիւր հաւն եթէ հաշուելու լինենք 50 ցէնտ, իսկ միւս թռչուններից ամէն մէկը 75 ցէնտ, ինչպէս՝ եւ նոցա փետուրը, ծուն, աղբը եւն. ապա այդ թուականի հաւերի տուած գումարը կընաւաստուի 290 միլիոն զուլարի:

Ուրիշ խոցով հաւերը միացեալ նահանգներում մի տարում յառաջ քերին մի գումար, որով կարելի էր գնել այդ տարուայ արտադրած բոլոր ոսկին եւ արծաթը, բոլոր ուխտարները եւ նոցա բուրդը, ինչպէս գարու, ցորենի, հաճարի եւ գետնախնձորի բոլոր արդիւնքը: Նոյն գումարով կարելի կըլինէր գնել նոյն տարուայ բոլոր կաթնատու կովերը, որ արժէր 265,955,343 զուլար: 1894 թ. հանքերի բոլոր արտադրութիւնները (ոսկի, արծաթ, երկաթ եւն), հաւասար էր միայն 218,199,788 զուլարի, որով հազիւ նոյն տարուայ հաւի ծուծը կարելի էր գնել: Բոլոր նահանգների նահանգական եւ վիճակական արդիւնքն էր 445,186,007 զուլար, որ շատ աւելի քիչ է հաւերի տուած եկամտից:

Հետեւեալ ցուցակը մի ամիսի գաղափար կարող է տալ հաւաքուածութեան համեմատական կարեւորութեան մասին:

Հաւերի հասոյթը—290,000,000. կրթական ծախք 478,215,536. խոզերի արժէքը—186,529,745. գետնախնձորի գինը—78,984,901. ծխախոտի գինը—75,574,220. քամրակի գինը—559,164,610. ցորենի գինը—237,558,998. վարսակի գինը—165,635,088:

* *

4400 տարուայ հաց: — Վերջին ժամանակներս, Բեռլինի գեղարուեստական ծմարանում ուսուցչապետ Վիտտմարկը ի ցոյց էր դրել մի այդպիսի հաց: Դա՝ եգիպտական հացի մի կտոր է, թխուած ցորենի կոշտ ալիւրից: Ամառի միջոցով հացի գոյնը տալուց յետոյ կարելի էր նկատել նորա վերայ ցորենի թեփը, այդ հացի մի կտորը օտարի վրայ զգալի հակադրութիւն առաջ քերեց, իսկ երբ այդ փոքրիկ արդիւնքի վրայ մի քանի կաթիլ կալիոնի—մանշուկի մշաթմոց աւելացրին՝ կապտաւուն գոյն ստացաւ: Դժբաղտաբար Prometheus ամսագիրը տեղեկութիւն չէ հաղորդում թէ որտեղ եւ ի՞նչ հանգամանքների մէջ է գտնուել այդ հաղուագիտ, արշիծծը հացը:

* *

Մ ու ռ ա ջ կ ա ն ն եր ի լ Ր ա գ ի Ր: — Պարիսում մի լրագիր է հրատարակուում յատկապէս մութացականների համար: Լրագիրն ամենօրեայ է եւ լոյս է տեսնում առաւօտները մի փոքր թերթի չափով եւ պարունակում է թիշը ցուցակ այն բոլոր կրօնական արարողութեանց, նշանադրութեանց, հարսանիքների, կնութեանց, թաղմանց եւայլն, որ օրուան ընթացքում տեղի պիտի ունենան: Նոյնօրը սինեակում լինում են աւելի կամ պակաս յայտնի քարեգործ տղամարդկանց եւ կանանց հասցէները, ուր որոշուած է եւ ժամը, երբ նոցա տանը գտնել կարելի է: Այնուհետեւ մանր զրոյցներ են լինում աղքատների կեանքից, նոյնպէս եւ ամեն տեսակ խրատներ:

— Եւրոպական պետութեանց մէջ 1000 քնակչից ժողովրդական զարոց յաճախող աշակերտների թիւն է Զուիցերիայում 167, Եռէգիայում 160, Գերմանիայում 458, Մեծ Բրիտանիայում 455, Նորվեգիայում 450, Փրանսիայում 446, Նիդերլանդիայում 445, Աւստրո—Հունգարիայում 150, Բելգիայում 110, Սլավիայում 105, Դանիմարկայում 100, Իտալիայում 89, Յունաստանում 62, Բուլգարիայում 52, Պորտուգալիայում 50, Ռումանիայում 44, Սերբիայում 55, Ռուսաստանում 24:

Նոցաիւր 1000 զինուորից անգրագէտ էին Եռէգիայում 1, Գերմանիայում 2, Դանիմարկայում 5, Զուիցերիայում 22, Նիդերլանդիայում 50, Փրանսիայում 55, Բելգիայում 144, Աւստրո—Հունգարիայում 220, Յունաստանում 500, Իտալիայում 590, Ռուսաստանում 708 եւ Սերբիայում 795:

* *

Կօպենհագէնում եւ Ստոքհօլմում կան առանձին ընկերութիւններ, որոնք մատակարարում են քնակիչներին առողջարար եւ մաքուր կաթ:

Վարալկների վրայ հսկում են ամսանաքուծք. նոցա իւրաքանչիւր օր նայում են ամեն մի կովի ստինքը եւ քննում կուրծքը: 1895 թ. Կօպենհագէնում 5000—6000 կովերի մէջ գտնուել է 422 հատ թորախտով հիւանդ կով: Հիւանդ կովի կաթը չէ ծախուում: Նրա յայտնուում է մի որ եւ է վարակիչ հիւանդութիւն ազարակներում ապրող կամ ծառայող մարդկանց մէջ, այդ ղէպքում կաթը նոյնպէս չէ վաճառուում: Գործը աւելի եւս խրախուսելու համար այդպի-

սի ղէպքերում աւերին տրուում է պարզեմք: Կթելու ժամանակ պահպանուում է վերին աստիճանի մաքրութիւն: Կթելուն պէս կաթը զրուում է սառուցի մէջ եւ այդ ծնով էլ տարուում է ընկերութեան գրասենեակը: Իսկ այդտեղ վերցնում են կաթից եւ քննութեան ենթարկում: Յետոյ կաթը քամում են աւազից շինած զտողով (filtre), որի ստորին շերտը ծածկուած է ոսպաչափ աւազի հատիկներով, իսկ վերի շերտը բռնում է աւելի մանր աւազ:

Յարմարեցրած գործիքների միջոցով քամելը կատարուում է ցածից վերեւ: Դորանից յայտնուում է, որ կաթը պարունակում է մեծ քանակութեամբ կեղտ: Յետոյ կաթը ածում են մի լիտրանոց շիշքի մէջ, որոնք նախապէս սոցայով լուացուում եւ ախտահանուում են հոսող գոլորշիով: Շիշքի լուանալը կատարուում է մեքենաներով պտտուող խողանակների միջոցով: Բացի ընկերութեան գրասենեակում քննելուց, կաթը քննուում է նաեւ պրոֆեսոր Բօրը (Bohr), որի զեկուցումները տպուում են ամենաշնամիս:

Ստորջուում ընկերութիւնը վաճառում է իւր եւ ուրիշների կաթը, երկու գոմում գտնուում են 550 կով: Կովանոցների պատերը եւ յատակը շինած են ցեմենտից, ոյսը թափանցում է մեծ քանակութեամբ, իսկ օդափոխութիւնէ շատ լաւ է: Միակ անյարմարութիւնն այն է, որ համարեա թէ ամբողջ տարին կովերը դուրս չեն գալիս գոմերից: Կաթը քամում են բարակ, թափանցիկ չղաքշով եւ անցնում պղնձէ մաղի միջով. ապա դնում են սառուցի մէջ: Կովերին նոյնպէս քննում է անասնաբուժը եւ հիւանդներին բաժանում առողջներից: Պահուում են միայն չափել կովերը, իսկ 2—5 ծնրուկից յետոյ վաճառուում են: (The Lancet 1894 թ.)

Թէ դիակն երով որչափ ապակաշուած են մեծ քաղաքների գետերը, երեւում է հետեւեալ տեղեկութիւններից: 1895 թ. Սենա գետից հանել են զանազան դիակներ՝ 5632 շուն, 5507 կատու, 9108 մեծ մկներ, 1720 հաւ եւ փասեան, 5942 զանազան թռչուններ, 4209 ծագար, 789 խոզ, 7 հորթ, 4 ուղնի, 55 ձի, 45 ուխար, 2 մորուկ ձիու, 45 կապիկ եւ 6 օձ, իսկ ընդամենը 28,807 դիակ՝ չհաշուելով իհարկէ մարդկանց դիակները: (La médecine modern).

ԱԶԳԱՅԻՆ.

ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԿՈՉԸ.

Եկայ՝ շինեցով սուրբ գնորանն Լուսայ:
Եարական.

Մեր բազդի անիւը այսօր մի տարօրինակ շրջան է կատարում: Մեզ թուում է, թէ մի կործանիչ ոյժ իւր զօրութեան ազդեցութիւնն է տարածում մեր բովանդակ կեանքի ամեն մի շրջանի վերայ եւ թէ մենք ափրւնով ներկուած վերջալոյսի ականատես մի

սերունդ ենք, որ արեւի վերջին ճառագայթների հետ՝ պէտք է մայր մահնն եւ մեր յուսոյ վերջին նշոյլները:

Բայց ահա մեր ականջին հնչում է սրբազան երգչի խօսքերը. «Էջ միաժինն ի հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» եւ մեր միտքը սլանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նուիրական տողերը: Մեր հոգու առաջ կենդանանում է Հայի հօգևոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր գործունէութեամբ եւ հեռանքներով: Սա անձնաւորը մի արձան կանգնեց աւելի տեւական եւ աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը. բայց եւ այդ անձնաւորը արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը սակայն Հայի վերածնութեան աւազանն է եղել դարէ ի դար: Դարեր են եկել, դարեր անցել, բայց նա հաստատուն խարխալ է մընայել մեր գոյութեան համար: Սա իբրեւ կենդանի վկայ՝ ականատես է եղել իւր որդւոց զլին հասած անյուր աղէտներին եւ իբրեւ զթառատ մայր մխիթարութեան եւ սփոփանքի աղբիւրներ է հոսեցրել նոցա սրտի մէջ: Շատ անգթութիւններ եւ աւերումներ է տեսել նա, բայց ամեն անգամ էլ վերակենդանութեան յոյս ներշնչել յուսահատ սրտերի մէջ: Այսօր եւս երբ մեր մաքի առաջ պտուտող պատկերները հազարաւոր Հայերի յօշոտուած դիակներն են, երբ մերի սովալլուկ որբերն ու այրիները կանոցք եւ տղամարդիկ հեռու իրենց սրբազան երկրից՝ օտարի աւելի լաւ ասած, մահուան դռներն են բաղխում եւ երբ հայրենիքի եւ եկեղեցու փրատակների փոշին ամեն կողմից վեր է բարձրանում՝ սրբազան երգչի խօսքերը յիշեցնում են մեզ, որ դեռ եւս ամեն ինչ կորած չէ, թէ դեռ եւս կանգուն է Հայութեան «Լուսոյ Սուրան», Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Քաղցր եւ նուիրական անունն

Երբ է եղել Հայի օրը այնպէս սեւ, ինչպէս այժմ, երբ է եղել նորա ապագան աւելի մռայլ եւ յուսահատ, քան այժմ: Բայց այսօր եւս Մայր տաճարի սրբազան կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարօղը. «Եկայք շինեցուք սուրբ զՍորանն Լուսոյ, ինչպէս